ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արենիի համայնքապետարանը հրավիրում է մրցույթի , որը տեղի կունենա 2023թ. հուլիսի 3-ին, ժամը՝ 12^{00}-ին: Հասցեն՝ Վայոց Ձորի մարզ, Արենի համայնք, Արենի բնակավայր, 15 փողոց, շենք 3:

Մրցույթ-վարձակալություն

Լոտ 1. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Ձիվա բնակավայրի վարչական տարածքում գտնվող 74 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-036-0102-0070, հողատեսքը՝ արոտավայր) գյուղատնտեսական նշանակության հողամասը, տրամադրել վարձակալությամբ: Տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանել հողամասի անշարժ գույքի դրույքաչափից ոչ պակաս՝ 200 000 ՀՀ դրամ:

Նշված հողամասը վարձակալությամբ հատկացվում է Արենի համայնքում վայրի բնության, կենդանական աշխարհի և բուսականության պահպանման ծրագրեր իրականացնելու նպատակով: Նշված հողատարածքների մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված անձը կամ կազմակերպությունը իրավունք չունի խոչընդոտելու համայնքի բնակիչների մուտքը արոտավայրեր՝ անասունների արածեցման, խոտհնձի, օրենքով չարգելված կենդանիների և թռչունների որսի և խոտաբույսերի հավաքման նպատակով:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է մրցույթի նախորդող երրորդ աշխատանքային օրը՝ ժամը 10^{00}-ն: : Հայտի ներկայացման համար անհրաժեշտ է վճարել 5000 ՀՀ դրամ տեղական վճար : Հայտ կարող են ներկայացնել ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք իրենց հետ կունենան անձնագիր, իսկ իրավաբանական անձինք՝ հիմնադիր փաստաթղթերի պատճենները, լիազորությունները հաստատող փաստաթղթերը և հայտի ընդունման համար նախատեսված 5000 ՀՀ դրամի անդորրագիրը: Հայտ ներկայացրած մասնակիցները նախքան մրցույթի սկսելը վճարում են նախավճար՝ լոտի 50%-ի չափով: Մրցույթում հաղթած անձը 10 օրվա ընթացքում պարտավոր է նոտարական վավերացմամբ համայնքապետարանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր՝ վերոնշյալ սահմանափակումների պահանջներին համապատասխան: Բոլոր վճարումները անհրաժեշտ կատարել անկանխիկ եղանակով հետևյալ հաշվեհամարին՝

- տեղական վճարի վճարման հաշվեհամարն է ՝ 900355105082 Կենտրոնական գանձապետարան:
- նախավճարի վճարման հաշվեհամարն է՝ 900355105058 Կենտրոնական գանձապետարան:
  Աճուրդում չհաղթած մասնակցին մուծված նախավճարի չափը վերադարձվում է՝ գրավոր դիմելուց հետո:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել հետևյալ հեռախոսահամարներին՝ 028160001, 093752480 Գևորգ Սիմոնյանին: